

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ՆՈՐ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

1991 թվականին Երևանի համալսարանի հրատարակչությունը լույս ընծայեց Պետրոս Հովհաննեսի Հովհաննիսյանի «Մովսես Խորենացու մատենագիտությունը» աշխատասիրությունը:

Սույն ժողովածուն պարունակում է Մովսես Խորենացու «Հայոց պատմության» և ընդհանրապես Պատմահոր երկասիրությունների (նաև վերագրվող) հրատարակությունների մատենագիտությունը՝ ըստ նրանց տպագրության ժամանակագրական կարգի, առաջին՝ 1695 թ. տպագրությունից մինչև վերջին հրատարակությունը: Տրվում են նաև յուրաքանչյուր հրատարակության, նրանց էջերի քանակի, տպագրության վայրի ու տարեթվի, ինչպես նաև որոշ լրացուցիչ տվյալների մասին տեղեկություններ: Աշխատությունն ընդգրկում է նաև այլալեզու թարգմանություններն ու հատվածական հրատարակությունները: Ուսումնասիրության վերջում զետեղված է երկասիրողների կենսագրական բառարանը:

Սույն մատենագիտությունը բաղկացած է հետևյալ գլուխներից.

ա) Ներածություն.

բ) Մատենագիտություն Մովսես Խորենացու «Պատմութիւն հայոց»-ի հրատարակությունների.

գ) Մատենագիտություն Մովսես Խորենացու Պատմության առանձին հատվածների հրատարակությունների.

դ) Մատենագիտություն Մովսես Խորենացու այլևայլ և նրան վերագրվող երկերի հրատարակությունների.

ե) Մովսես Խորենացու «Պատմութիւն հայոց»-ի երկասիրողների կենսագրական բառարան:

Վերը նշված գլուխները իրենց հերթին բաժանված են առանձին ենթագլուխների:

Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» առաջին անգամ լույս է տեսել 1695 թվականին Թովմա եպիսկոպոս Վանանդեցու (Թովմա Նուրիջանի Նուրիջանյան) աշխատասիրությամբ և ծախսով: Դիմելով համայն ընթերցողներին, Պատմության աշխատասիրողը՝ Թովմաս եպիսկոպոս Վանանդեցին, գրում է.

«Ես անպիտան և ունայն և թափուր յամենից լաւաց և օգտակարաց Թոմաս ծառայ ծառայից Աստուծոյ ի վայելուչ քաղաքէ Վանանդու Գողթնեաց, ձեռնամուխ եղեալ տպեցի զՀքնաղավէպ՝ և զԳեղեցկաշաւտ Պատմութիւնս, Նախնեաց մերոց, և Հայկազունեաց Տոհմի համեղ՝ և ախորժալուր ոճիւ»:

Ի մեջ այլ մատենագիտական աշխատանքների, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մատենագիտությանն են անդրադարձել շատ և շատ հայ և օտար մտավորականներ, ինչպիսիք են Մ. Միանսարովը, Ք. Պատկանյանցը, Կ. Կոստանյանցը, Ա. Սալմասլյանը, Գ. Զարբհանալյանը, Ա. Ղազիկյանը, Գ. Շրումպֆը, Հ. Պետրոսյանը և ուրիշներ: Իսկ միմիայն ու հատուկ Մովսես Խորենացուն նվիրված մատենագիտություններ են կազմել Մ. Էմինը, Վ. Լանգլուան, Գ. Գովրիկյանը, Պ. Ֆեթթերը, Խ. Ստեփանեն, Գր. Խալաթյանցը, Ն. Բյուզանդացին, Հ. Արմենը և ուրիշներ: Սակայն այս բոլորի մեջ առավել ամբողջականները Մ. Աբեղյանի, Ստ. Մալխասյանցի և Ս. Մարաբյանի կազմած ցանկերն են:

Իր իսկ կազմած Մովսես Խորենացու «Հայոց պատմության» սույն մատենագիտության մասին Պետրոս Հովհաննիսյանը «Ներածություն»-ում գրում է.

«Ասել, թե սույն ցանկը զերծ է վրիպակներից, ճիշտ չի լինի: Հայտնի է, որ չկան ու չեն կարող լինել անթերի, վերջնական մատենագիտական ցանկեր: Ուստի մեծագույն շնորհակալությամբ կընդունենք սույն մատենագիտության վերաբերյալ ընթերցողների հայտնած դիտողությունները, լրացումներն ու ցանկությունները, որոնք հաշվի կառնվեն Մովսես Խորենացու լիակատար մատենագիտությունը կազմելու ժամանակ»: